ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԿԱՊՍԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

« 18 » Հուլիսի 2011թ. N:__11__ գ. Կապս

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՃՇՇ» ՓԲԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2.0 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ 28.09.2007Թ ԹԻՎ 2369 ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի փոխելու մասին» թիվ 558-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով 2009 թվականի մարտի 13-ին«Ախուրյանի ՃՇՇ» ՓԲԸ տրամադրված թիվ 281 լեռնահատկացման ակտը, որի հիման վրա փոփոխվել է 201-011 կոդում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կապսի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ «Ախուրյանի ՃՇՇ» ՓԲԸ 28/09-2007 թ. թիվ 2369 պայմանագրով օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող 2.0 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագրում կատարել փոփոխություն.

Պայմանագրի թիվ 1.2 կետում օգտագործման նպատակը դարձնել որպես «բազալտի հանքավայր օգտագործելու նպատակով» :

Լ. ՄԿՈՅԱՆ